

ԳԱՌՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՎԱՆՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

Հ. Մ. ԲԱՐՔԻՆՅԱՆ

«Զայտու մամանակաւ կատարէ Տրդատ զշինուած սմրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մսծուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք բարձր քանդակաւ, ի համար Բեռ իւրոյ Խոսրովիդիստոյ, և զրեալ բնմա զյւշատակ իւր հելլենացի գրով»¹:

Այսպես է նկարագրում Մովսես Խորենացին Տրդատ Ա-ի (որին նա սխալմամբ քրիստոնեությունն ընդունած Տրդատ Գ-ն է համարում) շինարարական գործունեությունը Գառնիում: Մովսես Խորենացու այս սովյալից պարզվում է, նախ, որ Տրդատ թագավորը Գառնիում կառուցել է ամրոց, երկրորդ՝ որ նա ամրոցի տերիտորիայում կառուցել է «տուն հովանոց» և երրորդ՝ որ այդ «տուն հովանոցը» կառուցված է եղել Տրդատի Բեռ համար: Այս բոլորի մասին, վերջացնում է Մովսես Խորենացին, Տրդատ թագավորը հիշատակել է Գառնիում թողած իր հունարեն գրերով գրված արձանագրության մեջ:

Թագավորական «տուն հովանոց»-ը չի կարելի այլ կերպ հասկանալ, քան «ամառային պալատ, ապարանք»: Հայկազյան բառարանում «տուն» բառի դիմաց տրված է հետևյալ մեկնարանությունը. «Յարկ, շինուած բնակութեան՝ որմնապատ՝ յարկածածկոյթ՝ բաժանեալ ի սենեակս՝ դրամբք և պատուհանիք, ևս և տաղաւուր, ապարանք, պալատն տաճար»²: Այդ իմաստով «տուն հովանոց»-ի ամենաճիշտ բացատրությունը տվել է Ն. Էմինը՝ Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» իր առաջին թարգմանության մեջ. «ОН ВЫСТРОИЛ В НЕЙ: (այսինքն Գառնի ամրոցում) ЛЕТНИЙ ДВОРЕЦ»³: Ժամանակակից ուսումնասիրողները, քաջածանոթ լինելով Գառնիի հեթանոսական տաճարին, որը լրիվ բացվել էր Ն. Մառի և Յա. Սմիռնովի պեղումներից հետո, այդ «տուն հովանոց»-ը, Մովսես Խորենացու տված նկարագրությունից ելնելով («մահարձանօք, սքանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ»), համարել են Գառնիի հեթանոսական տաճարը: «Տուն հովանոց»-ը, նույնացնելով Գառնիի հեթանոսական տաճարի հետ և Խորենացուց գիտնելով, որ Տրդատը իր շինությունների մասին գրավոր հիշատակություն է թողել հունարեն տառերով գրված արձանագրության մեջ, և վերջապես 1945 թ. հայտնաբերված հունարեն արձանագրությունը՝ ամսարելով հենց այն, ինչի մասին մատնացույց էր արել պատմաճայրը, ուսումնասիրողները, բնական է, ստիպված էին Գառնիի հունարեն արձանագրության մեջ փնտրել այդ հեթանոսական տաճարի հիշատակությունը, տաճար, որը Խորենացին սխալմամբ «տուն հովանոց» էր համարել, այսինքն փնտրել են հունարեն ΝΑΟΝ — տաճար բառը, կամ իմաստով նրան մոտիկ բառեր: Բացառությամբ Գ. Սարգսյանի, բոլոր ուսումնասիրողները այդ բառը փնտրել են Գառնիի հունարեն արձանագրության երրորդ տողի վերջում — ΑΙΚΤΙΛΕ (այսինքն ΕΚΤΙΣΕ) — «կառուցեց» բառից անմիջապես հետո, որտեղ պահպանվել են ընդամենը երկու կամ երեք տառ: Ստ. Հիսիցյանը ΝΑΙ-ն վերականգնեց ΝΑΟΝ (տաճար)⁴, Հ. Մանանդյանը 1916 թ. ΝΑΟΝ⁵, իսկ 1951 թ.՝ ΝΑΙΣΚΟΝ (часовня домовая церковь, катедра, զ. Աջ. Աբրահամ-

¹ «Մովսեսի Խորենացու Պատմություն Հայոց», Տփղիս, 1913, Գիրք Բ, գլ. 91, էջ 241—242:

² Ն. Հ. Բ. հատ. Բ., էջ 891:

³ «История Армении Моисея Хоренского», пер. Н. Эмина. Москва, 1858, էջ 159: Իր «նոր» թարգմանության մեջ Էմինը «летний дворец»-ը փոխարինել է «вилла»-ով: Տե՛ս «История Армении Моисея Хоренского», Новый перевод Н. Эмина. Москва, 1893, էջ 138:

⁴ «Սովետական Հայաստան», 23 սեպտեմբերի 1945, № 201:

⁵ Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 5:

⁶ Պ. Ա. Манандян, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, «Известия» АН Арм. ССР, 1951, № 4, էջ 15:

յանը ΝΑΙΔΙΟΝ⁷ (նույն իմաստն ունի, ինչ որ և ΝΑΙΣΚΟΝ), Բ. Առաքելյանը ΝΑΟΝ (храм⁸ հարցականով Կ. Վ. Տրեվերը, տաճարի փոխարեն կարգաց ΑΓΡΟΙΚΙΑΝ (աղա- բակ)⁹։

Մովսես Խորենացին Փառնիում կատարված շինարարության մասին խոսելիս, ըստ երևույթի, օգտվել է նախ և առաջ այն զրույցներից, որոնք տարածված էին ժողովրդի մեջ Տրդատի շինարարական գործունեության մասին։ Երկրորդ անձամբ կարգացել է Տրդատի արձանագրությունը Փառնիում, և վերջապես ինքր տեսել է խնդրո առարևա շենքերը։

Զրույցների թվին է պատկանում, հավանաբար, Խորենացու վկայությունն այն մասին, որ «տուն հովանոց»-ը կառուցված է եղել իբր Խոսրովիդուխտի համար։ Ինչ վերաբերում է այն հիշատակությանը, որ Տրդատը կառուցել է ամրոց և «տուն հովանոց», այսինքն «ամառային պալատ», ապա այդ մասին Խորենացին կարգացել է Փառնիի հունարեն արձանագրության մեջ։ Եվ վերջապես Խորենացին անձամբ տեսել և նկարագրել է ամրոցի պարսպի շինարարական տեխնիկան («որձարար և կոփածոյ վիճօք, երկաթազամ և կապարով մածուցեալ») և իր կողմից «տուն հովանոց» կարծված շենքի մանրամասնությունները («մահարձանօք, սրանչևի զրօշուածովք, բարձր քանդակա»)։

Խորենացին, գալով Փառնի, նախ և առաջ տեսել է ամրոցի պարիսպները, ապա մոտեցել է ու կարգացել պարիսպների վրա փորագրված հունարեն արձանագրությունը, որտեղ գրված էր այսուրոսի և ապարաւնֆի կառուցման մասին։ Խորենացին չի տեսել (և ամենայն հավանականությամբ չէր էլ կարող աեսնել) Տրդատի կառուցած ամառային պալատը, որովհետև նրա ժամանակ (այսինքն Տրդատ Ա-ից ավելի քան շորս հարյուրամյակ անց) այն պետք է որ քանդված լիներ։ Փառնիի հեթանոսական տաճարին կից կառուցված քրիստոնեական եկեղեցին, որը Բ. Առաքելյանը թվագրում է V—VII դարերով, հիմնադրված է Փառնիի Տրդատի կողմից կառուցված պալատի ավերակների վրա և շինարարները, բոտ երևույթին, չեն էլ իմացել, որ իրենք եկեղեցու հիմքերը զցում են Տրդատի կառուցած ամառային պալատի ավերակների վրա։ Փառնիի պեղումների ժամանակ հայտնաբերված պալատական շենքի սովորակները մենք համարում ենք ավերակները այն բուն հույանոց-ի, որի մասին Մովսես Խորենացին կարգացել է Տրդատի հույանոց արձանագրության մեջ, նախքան ամրոցից ներս մտնելը։

Արդ, որն է այն հունարեն արձանագրությունը, որտեղ ըստ Մովսես Խորենացու գրված էր Փառնիում ամրոցի և ապարաւնֆի կառուցման մասին։ Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ դա 1945 թ. հայտնաբերված հունարեն արձանագրությունն է։ Եղել են և ուսումնասիրողներ, որոնք եկել են այն եզրակացության, որ Խորենացին նկատի ունի մի այլ արձանագրություն, որը զեռուս չի հայտնաբերվել։ Եվ վերջապես, ուսումնասիրողների մի երրորդ խումբ առաջ է քաշում այն միտքը, թե Փառնիում կարող է երկու տարբեր հունարեն արձանագրություններ եղած լինեն։ Այդ հարցի վերջնական լուծումը Բ. Ն. Առաքելյանը և Կ. Վ. Տրեվերը կապում են Փառնիի հետազոտական ուսումնասիրության հետ։

Այժմ անդրադառնանք Փառնիի հունարեն արձանագրությանը։ Ինչպես հայտնի է, վեճը աչ կողմից չարդված է։ Գ. Սալգսյանը եկել է այն եզրակացության, որ բացակայող տարածության վրա կարող էր տեղավորվել մինչև վեց տառ¹⁰։ Այստեղ անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, որ արձանագրությունը կարճ ու երկար, սեղմ և ոչ սեղմ գրված տողեր չի ունեցել (խոսքը, իհարկե, հետո գրված մի քանի բառի մասին չէ)։ Ամեն ինչ գրված է եղել համաչափ։

Արձանագրությունն այժմ ունի հետևյալ տեսքը․

ΗΑΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ
ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΑΝΑ
ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ ΑΙΚΤΙΣΕΝ ΑΙ
ΒΑΣΙΛΙΑ ΤΟΝ ΑΝΙΚΗΤΟΝ ΚΑΣ
ΑΙΤΟΥΣ ΑΙ ΤΗΣ ΒΑΣΙΛΕΙ

⁷ Ա. Ն. Արրա համայն, Փառնիի հունարեն արձանագրությունը, «Էջմիածին», 1917, մարտ—ապրիլ։

⁸ Б. Аракелян, Гарни 1, Ереван, 1952, էջ 67։

⁹ К. В. Тревер, Очерки по истории культуры Древней Армении, М.-Л., 1953, էջ 180։

¹⁰ Գ. Սալգսյան, Փառնիի հունարեն արձանագրության շուրջը, Հայկական ՍՍԻԳՍ «Տեղեկագիր», 1956, № 3, էջ 48։

MENNEAS ΥΠΟ ΕΞΟΥΣΙΑΤΕΙΑΡΙ
ΑΙΤΟΥΡΓΟΣ ΤΩ ΜΕΓΑΛΩ ΣΗ
ΜΕΤΑΜΑΘΗ Ω ΚΑΙ ΕΥΧΑΡΙΣΤ
ΤΟΥ ΜΑΡΤΥΡΙΟΥ

Առաջին տողը, ինչպես Հ. Մանանդյանը 1946 թ.¹¹ և Գ. Սարգսյանը, ես լրացնում եմ ΒΑΣΙΛΕΥΣ րառով¹²: Այս հարցում ես միանգամայն համաձայն եմ Գ. Սարգսյանի հետ¹³:

Արձանագրության երկրորդ տողի վերջին բառի մեր վերականգնումը միանգամայն բացառում է առաջին տողում Ο ΜΕΓΑΣ լրացումը: Երկրորդ տողի ΜΕΓΑΛΗ ΑΡΜΕΝΙΑΣ րառերով ավարտվում է Տրդատի ամբողջ տիրույթաուրան — ΠΑΙΟ ΤΙΡΙΔΑΤΗ ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ: Գառնից հետո Տրդատը իր արձանագրության մեջ հրշատակում է այն, ինչ սուաջին հերթին արձանի է գտել որչափակելու: Դառնում կատարած իր շինարարությունից: Այդ օրյակի անվանումից արձանագրության վրա պապականի է ընդամենը երեք տառ ΑΝΑ-, որոնք ուսումնասիրողները լրացրել են. Ստ. Լիոնցյանը ΑΝΑ(Ξ) և հաջորդ տողի առաջին երկու տառը -ΩΣ կցելով դրան ստացել է ΑΝΑ(Ξ)Ω և բացատրել «անարձան», հակառակ որ դա մակրայ է և նշանակում է «անարձանորեն»: Հ. Մանանդյանը լրացրել է ΑΝΑ(ΣΣΩΝ) «թագավորելով» և հաջորդ ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ րառերի հետ «թագավորելով որպես զերազույն տեր»: Այ. Արրահամյանը լրացրել է ΑΝΑ(ΚΤΟΣ) (ΑΝΑ—արքա բառի սեռական հոլով): Գ. Վ. Տրեվերը կարգացել է ΑΝΑ(ΚΤ-Ρ), իմաստով նույնն է, ինչ է ΑΝΑΞ-ը:

Վերոհիշյալ ուսումնասիրողներն այսպիսով Տրդատի տիրույթաուրան ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ րառերով չեն համարել վերջացած և դա հասկանալի է: Առաջին տողում ΒΑΣΙΛΕΥΣ-ի փոխարեն վերականգնելով Ο ΜΕΓΑΣ, նրանք պարտավոր էին ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ-ից հետո թագավոր բառը կամ այդ միտքն արտահայտող որևէ այլ բառ գտնել:

Գ. Սարգսյանը ΑΝΑ-ի խնդիրը համարել է զեռես ոչ պարզ¹⁴, և դրանով իսկ, միանգամայն իրավացիորեն, կասկածի տակ առել նախորդ ուսումնասիրողների ΑΝΑ-ի կապակցությունը առաջ քաշած բոլոր լրացումները:

Գառնիի արձանագրության երկրորդ տողի վերջին ΑΝΑ-ն ես լրացնում եմ ΑΝΑ(ΚΤΟΡΟΝ) «ապարանք, պալատ»¹⁵, և երրորդ տողի ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ ΑΙΚΤΙΣΕΝ րառերով ստացվում է. «Մեծ Հայաստանի թագավոր Տրդատը, որպես զերազույն տեր, ապարանք կառուցեց»:

Ինչպես ցույց է տալիս Գ. Սարգսյանը, «Հելլենիստական ժամանակաշրջանում գոյություն ուներ մի սովորույթ՝ սերտ կապված հին արևելյան տրագիցիաների հետ, ըստ որի՝ որևէ օրյակ-տի (մեծ մասամբ քաղաքի, բայց նաև տաճարի, ամրոցի և այլն) հիմնադրումը թագավորի ֆունկցիան էր»¹⁶: Մենք դրա վրա կավելացնենք նաև թագավորական ապարանքի կառուցումը, որ հասկանալի է, միայն թագավորին կարող էր վերաբերել: Այդ իմաստով Գառնիի արձանագրության երկրորդ և երրորդ տողերին մեր տված մեկնաբանությունը որպես զերազույն տեր կառուցեց ապարանք, արդարացվում է:

Այս ΑΝΑΚΤΟΡΟΝ բառի կապակցությունը, որ կոնկրետ նշանակում է պալատ, ապա-

¹¹ Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրություններ... էջ 31: 1931 թ.
Հ. Մանանդյանը վերանայեց իր ընթերցումը և ΞΑΝΙΛΕΥΣ-ի փոխարեն վերականգնեց Ο ΜΕΓΑΣ:

¹² Կ. Վ. Տրեվերը նման վերականգնումը առարկելի է համարում ասելով, որ առաջին տողում ΞΑΝΙΛΕΥΣ բառի համար տեղ չկա (նույն տեղում, էջ 190): Բայց գա այդպես չէ-րարի այժմյան թարգման վիճակում ΤΙΡΙΔΑΤΗ անունից հետո կա երեք տառի անդ, իսկ եթե թարգման մասն էլ նկատի ունենանք, ապա նշարավոր է տեղադրել մինչև ինք առ, իսկ Խ թ տառից բաղկացած ΞΑΝΙΛΕΥΣ բառը (նամանավանդ որ մեկ տառը Ι է), բավականին ազատ գրությունը միանգամայն հանդիստ կտեղավորվեր:

¹³ Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 48—49: Հմմտ. Տրդատ Գ-ի տիագոսը՝ Աղաթան-գեղոսի հունարեն տեքստում. Τριεδάτου Ξασιλεύς Μεγάλης Ἀρμενίας. Gérard Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange. Citta del Vaticano, 1946, p. 37, § 40:

¹⁴ Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 49:

¹⁵ Ἀνακτορον բառի համար սովորական է նաև հոգնակի թվի գործածությունը Ἀνακτορα (ապարանք):

¹⁶ Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 54:

րանք, նաև սրբատեգի, տաճար¹⁷, չի կարելի չվերհիշել Պորենացու հիշատակած «տուն»-ը, որ ինչպես մի անդամ ցույց տվեցինք, բացի սովորական «տուն» նշանակությունից, ունի նաև «տաղավար, ապարանք, պալատ, տաճար» իմաստը:

AIKTILE(N) բառից հետո պահպանված տառերով, ըստ Գ. Սարգսյանի, հաջորդ տողի ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α-յի՝ թագուհու անունը պետք սկսեր տրական հոլովով¹⁸: Բայց մենք բացառված չենք համարում այն, որ այնտեղ կարող էր ամենևին էլ անուն եղած չլինի, այլ պարզապես լինել մի բառ, որը Պորենացին թարգմանել է «հովանոց», այսինքն «ամառային» և ἰνακτορον բառի հետ հասկացվում է որպես «ամառային պալատ»: Բացի «հովանոց» նշանակող բառից, այստեղ կարող էր լինել նաև որևէ ածական (պայծառ, փառահեղ, հոյակապ, մեծ և այլն), որը վերաբերեր այդ ἰνακτορον-ին, բայց մի վերապահությունով, այդ ածականից, կամ «հովանոց» նշանակող բառից հետո անպայման պետք է լինի հաջորդ տողի առաջին՝ թագուհի (ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α) բառի հոգը՝ ΤΗ տրական հոլովով: Բայց եթե այդ բառը պիտի վերաբերի անպայման թագուհուն, ապա այն կարող է միայն թագուհուն գովարանող մի ածական լինել՝ տրական հոլովով: Վերջին դեպքում ΤΗ հոգի առկայությունը բացառվում է:

Այսպիսով, արձանագրության այս մասի իմաստն այն է, որ Տրդատ թագավորը թագուհու համար Գառնիում կառուցեց ապարանք (և ոչ թե ամրոց, ինչպես ենթադրում են որոշ ուսումնասիրողներ): Խորենացին Գառնիի շինարարությունը վերագրում է քրիստոնյա Տրդատ Գ-ին: Հունարեն արձանագրության մեջ կարդալով «թագուհի» բառը, պատմահայրը կարող էր ենթադրել, որ խոսքը Խոսրովիդուխտի մասին է: Հնարավոր է, որ Գառնիի պալատը տրադիցիայով հետագայում ևս շարունակած լինելու մնալ որպես հայ Արշակունիների կանանց ամառային ապարանք, այդ թվում նաև Տրդատ Գ-ի կնոջ՝ Աշխենի և Տրդատի բրոնզե Խոսրովիդուխտի համար¹⁹:

Վերադառնանք հունարեն արձանագրությանը: Չորրորդ տողի ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α բառով վերջանում է Տրդատ թագավորի Գառնիում կատարած շինարարության մասին առաջին փաստի հիշատակությունը: Գրանից հետո գալիս են ΤΟΝ ΑΝΙΚΗΤΟΝ ΚΑΣ... բառերը՝ Մենք ընդունում ենք վերջին բառի Կ. Վ. Տրեվերի վերականգնումը՝ ΚΑΣ(ΤΡΟΝ)²⁰: Բայց ինչպես ասվեց, ծարրված մասում տեղավորվում է վեց տառ, իսկ ΚΑΣ(ΤΡΟΝ) լրացումով երկու տառի դատարկ տեղ է թույլտ: Բացակայող երկու տառերը են լրացնում եմ ΤΕ շաղկապով, որ միանգամայն անհրաժեշտ է այս կոնտեքստում: ΤΕ նշանակում է «և»: Այսպիսով, արձանագրության առաջին չորս տողերը վերծանվում են հետևյալ կերպ.

ΗΛΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ (ΒΑΣΙΛΕΥΣ)
ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΑΝΑ(ΚΤΟΡΟΝ)
ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ ΑΙΚΤΙΣΕΝ ΑΙ (.)
ΒΑΣΙΛΙΣΑ ΤΟΝ ΑΝΙΚΗΤΟΝ ΚΑΣ(ΤΡΟΝ ΤΕ)

¹⁷ См. Н. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. I, Москва, 1958, էջ 121 («Дворец, чертог, обычно святилище, храм»). Δ τ μ τ ρ α χ ο υ, Μέγα Λεξικόν τῆς Ἑλληνικῆς γλώσσης, Ἀθῆναι, 1949, σελ. 406—407.

¹⁸ Կ. Վ. Տրեվերը առաջ է րաշել մի ենթադրություն, որ 3-րդ տողի վերջին ΑΙ-ով կարող է սկսվել ΑΝΑΚΤΟΡΟΝ բառը, բայց ինչպես նա ցույց է տալիս, բարի վրա շատ լավ երևում է վերջին Ι-ն, որը չէր կարող Ν տառի մասը լինել, այն կարող է լինել միայն Ι կամ Γ տառի ուղղահայաց գիծը: Ինչպես տեսնում ենք, Կ. Վ. Տրեվերը Ἀνακτορον բառը փնտրել է արձանագրության երրորդ տողի վերջում, երբ այն հաստատ գտնվում է երկրորդ տողի վերջում և այդ բառից պահպանվել են առաջին երեք տառերը ΑΝΑ-:

¹⁹ Հայ Արշակունի թագավորների ամառային ապարանքը, ըստ երևույթին, գտնվում էր Ապարանում: Վայրի անունը (Ապարան), այնտեղ հայտնաբերված Տրդատի հունարեն արձանագրությունը, ամրոցի ավերակները շեն բացառում նման հնարավորությունը:

²⁰ Καστορονը չեզոք սեռի գոյական է և պարտավոր է չեզոք սեռի հոգ էլ ունենալ (τό), բայց մեր արձանագրության մեջ հոգը արական սեռի է (τόν): Տրեվերը այն համարում է սխալ և բացատրում նրանով, որ հաջորդ ἰνακτορον բառը ձայնավորով է սկսվում, դրա համար նախորդ բառը (հոգը)—Ν-ով պիտի վերջանալ: Բայց պետք է ասել, որ կիսորոտում, Գոնտոտում և այլուր καστορον արական սեռի է համարված և καστρος (Տե՛ս Ἐλευθερου-6ακτ., Ἐγχειριστικὸν Λεξικόν, τόμ. 7, Ἀθῆναι, 1929, σελ. 386) և հայցականը կլինի τον καστορον: Հետևարար մեր արձանագրության մեջ և ոչ մի սխալ կարող է տեղ գտած չլինել:

«Հելիոս Տիրիգատես Թագավոր
Մեծ Հայաստանի, ապարանք
որպես դերագույն տեր կառուցեց
Թաղուհու համար, և անառիկ ամրոցը»²¹

Հինգերորդ տողը շինարարության թվականն է, Տրդատի Թագավորության 11-րդ տարին, որի ճիշտ ընթերցումը տվեցին Կ. Վ. Տրեվերը և Աշ. Արրահամյանը. ΑΙΤΟΥΣ ΑΙ ΤΗΣ ΒΑΣΙΛΕΙΑΣ, Բայց այս վերջին բառը երկու տառով լրացնելուց հետո արձանագրության մեջ մնում է ես մեկ բառի տեղ և դժվար թե ΒΑΣΙΛΕΙΑΣ-ով ավարտված լինե՞ր 5-րդ տողը: Այստեղ միանգամայն տեղին է ΑΥΤΟΥ («իր») բառի վերականգնումը, որն առաջարկված է Աշ. Արրահամյանի կողմից. այդպիսով ստացվում է ΑΙΤΟΥΣ ΑΙ ΤΗΣ ΒΑΣΙΛΕΙΑΣ ΑΥΤΟΥ — «իր Թագավորության 11-րդ տարում»:

Ըստ իմաստի, արձանագրության առաջին հինգ տողերը բաժանվում են հետևյալ կերպ.

- 1. ΗΛΙΟΣ ΤΙΡΙΑΤΗΣ ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ
- 2. ΑΝΑΚΤΟΡΟΝ ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ ΑΙΚΤΙΣΕΝ ΑΙ (. . . .) ΒΑΣΙΛΙΑ
- 3. ΤΟΝ ΑΝΙΚΗΤΟΝ ΚΑΣΤΡΟΝ ΤΕ
- 4. ΑΙΤΟΥΣ ΑΙ ΤΗΣ ΒΑΣΙΛΕΙΑΣ ΑΥΤΟΥ.

Պետք է ավելացնել և հետևյալը: Գառնիի հունարեն արձանագրության մեջ խոսվում է պալատի և ամրոցի կառուցման մասին: Այնտեղ հեթանոսական տաճարի մասին խոսք չկա: Հավանաբար Տրդատի 11-րդ տարում դեռևս տաճարի շինարարությունը չէր սկսվել:

Խորենացին վկայում է, որ Տրդատ Թագավորը Գառնիում կառուցել էր ամառային պալատ՝ հր լեռը համար և ամրոց և որ այդ մասին նա հիշատակություն էր թողել Գառնիի հունարեն արձանագրության մեջ:

1945 թ. Գառնիում հայտնաբերված հունարեն արձանագրության մեր վերծանումից ստացվեց, որ Տրդատ Թագավորը բազումիս համար կառուցել է ապարանք, ինչպես նաև ամրոց: Փաստերի նման համընկնումը մի ավելորդ անգամ հաստատում է Խորենացու տվյալների արձանահավատությունը:

* * *

Այժմ համառոտ կանգ առնենք հունարեն արձանագրության մեջ հանդես եկող երկու այլ անունների վրա, որոնք առաջին անգամ մատնացույց արեց Կ. Վ. Տրեվերը: Պարզ է. Գառնիի շինությունները կատարվեցին Տրդատ Թագավորի հրամանով: Բայց անմիջականորեն այդ գործերը ղեկավարում էր և ֆինանսավորում մի անձնավորություն, որը տվյալ շինարարության ΑΙΤΟΥΡΓΟΣ — էր²², նրա անունը հիշված է Գառնիի արձանագրության մեջ. Կ. Վ. Տրեվերը այն կարդում է ΜΕΝΝΕΑΣ: Այդ անունը, ինչպես ցույց է տալիս նա, շատ հաճախ է հանդիպում Փոքր Ասիայի հունարեն վիճական արձանագրությունների մեջ. Գառնիի ΜΕΝΝΕΑΣ-ի կապակցությամբ ուշադրավ են Կ. Վ. Տրեվերի հետևյալ խոսքերը. «Հավանաբար նա հայ էր և ոչ թե հույն, և նրա անունը՝ ΜΕΝΝΕΑΣ, որ հանդիպում է Փոքր Ասիայի տերիտորիայի վրա հայտնաբերված տասնյակ արձանագրություններում, ըստ երկվույթիս, հունականացված է, հայերեն. հավանաբար, նա այլ կերպ էր հնչում»:

Կ. Վ. Տրեվերի այս ճիշտ ընթերցման դեմ դուրս եկավ Հ. Մանանդյանը, պնդելով, որ այդ անունը չի հանդիպում հին հայ մատենագրության մեջ²³, Մեր կարծիքով, իրավացին Կ. Տրեվերն է, ΜΕΝΝΕΑΣ-ը հունականացված հայկական անուն է, և այն մեզ են հասցրել Մովսես Խորենացին և ուրիշներ: Իր «Հայոց պատմության» երկրորդ գրքի 57-րդ գլխում պատմահայրը խոսում է Ամատունյաց նախարարության առաջացման մասին. «Յաւուրս սորա (Արտաշիսի). — գրում է Խորենացին, — ասեն եկեալ գաղգ Ամատունեաց ի կողմանցն արեւելից Արեւաց աշխար-

²¹ Այս բառի ճիշտ մեկնարանությունը տվել է Կ. Վ. Տրեվերը (նշվ. աշխ., էջ 183):

²² Կ. Վ. Տրեվեր, նշվ. աշխ., էջ 209:

²³ Я. А. Манандян, Новые заметки о греческой надписи и ялыческом храме Гарни, էջ 18:

հին Բայց են սորա ընթացմամբ Հրեայի Մանուելայ ումեմնէ: ...պատուն յկրտաշխէ գեղիք և դաստակերտօք և անուանին Ամատունիք, որպէս թէ եկր: Եւ կէսր ի Պարսից Մանուելանս զնոսա կոչեն յանուն նախնւոյն:

Եղիշեն տալիս է Վասակ Սյունու հետ դործակցած հայ նախարարների մի ամբողջ ցուցակ: Այդ ցուցակում է գտնվում նաև մի Ամատունի. «Սեպուհ մի Ամատունեաց Մանուէլ անուն»²⁴:

Հավանական է թվում, որ Գառնիի արձանագրության MENNEAS անունը հունականացված ձևն է Ամատունի նախարարության մեջ լայն տարածում գտած Մանեն, Մանուելայ (սեռ.) տոհմանվան, ինչպես նաև այն, որ Գառնիի շինությունները իր վրա էր վերցրել Ամատունի նախարարությունը: Ըստ հայկական մի շարք աղբյուրների, Ամատունիները վարում էին հազարապետության պաշտոնը²⁵, և ինչպես Հ. Մանանդյանն է ցույց տվել, հազարապետի պարտականությունն էր աչակցել Երկրի ինքնաբերական սոխատանհներին²⁶:

Գառնիի հունարեն արձանագրության վերջում դրված են նաև հետևյալ բառերը. METAVATH TOY MARTYRIOY: META նախդիր է և սեռական հոլովով նշանակում է «միասին», «հետ»: Եթե անձատենք այդ META-ն, մնում է MATH. որը, ինչպես ցույց տվեց Կ. Վ. Տրեվերը, հատուկ անուն է: Բայց հունարեն լեզվի կանոնների համաձայն եթե ձայնավորով սկսվող բառի առաջ կա նախդիր, որ նույնպես ձայնավորով է վերջանում, ապա նախդիրի վերջին ձայնավորն ընկնում է: Եթե Գառնիի արձանագրությանը մոտենանք այդ տեսանկյունից և META-ի փոխարեն կարդանք MET, ապա անունը ոչ թե MATH (մի անուն, որ ոչ մի տեղ վկայված չէ), այլ AMATH կլինի: Եվ եթե հաջորդ տողի TOY-ն MARTYRIOY բառի հոգր չէ, այլ AMATH բառի վերջավորությունը՝ սեռական հոլով. ինչպես որ այստեղ պահանջում է նախդիրը, ապա ստացվում է AMATHHIS անվան սեռական հոլովը AMATHTOY²⁷: Այսպիսով հնարավոր է, որ մենք գործ ունենք իրանական Hamadatha անվան հետ. որի հունարեն գրության ձևը AMAΔATHHΣ (AMADATHHΣ) է: Այդ անունը հիշատակված է Հովսեփ Փլավիոսի կողմից²⁸, որն ապրել է և գրել հենց Գառնիի արձանագրության գրության ժամանակ: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա պետք է հրաժարվել MATH անունից, որի գոյությունը կասկածներ է հարուցում:

²⁴ «Եղիշի Վասակ Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 92:

²⁵ Հմմտ. Կորիւն, Վենետիկ, 1894, էջ 44. «Վահան անուն յազգէն Ամատունեաց որ էր հազարապետ Հայոց Մեծաց»: Խորենացի, Գ. 67, էջ 357. «Բայց յազգեաց քաջն Վահան Ամատուար... ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ պարսից հազարապետութիւնն աշխարհիս Հայոց»: Շահապիվանի ժողովի կանոնները, տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 427. «Եւ լինէր այս ի Ե ամի Թագաւորութեանն Յագկերտի Պարսից արքայի և Վասակայ Սիւնոյ մարզպանութեանն Հայոց և Վահանայ Ամատունու հազարապետութեանն և Վրուայ Խոռոտունոյ մարզպանութեանն»: Խորենացի, Բ., 82, էջ 224. «Իսկ Տրդատ ի հազարապետութիւն Հայոց գծտայն կացուցանէ»: Խորենացի, Բ., 77. «Բայց ի նախարարէ ումեմնէ. որոյ անուն Օտայ կոչէր ի տոհմէն Ամատունեաց, որ փեսայ էր ազգին Սլկունեաց և սնուցող Խոսրովիդիստոյ»: Խորենացի, Բ., 84. «Սգուկ նահապետ ազգին Սլկունեաց, զինքեանն սպանանէ զփեսայ, զծերացեալ Օտայ, որ էր ի տոհմէն Ամատունեաց և սնուցող Խոսրովիդիստոյ քն թագաւորին»:

²⁶ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 69: Ամատունիների նստավայրը Օշականն էր: Օշականից մի քանի կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Նոբիսիմն եկեղեցին. որի վերակառուցման ժամանակ, հենց վերջերս, հայտնաբերվեցին Գառնիի հեթանոսական տաճարի հար և նման բարձրաքանդակներ: Բացառված չէ, որ այն շենքը, որի բեկորները տեղ դտան հետազայում Նոբիսիմնի եկեղեցու հիմքերում, կառուցված լինի նույն Ամատունիների կողմից:

²⁷ Իհարկե, շատ դայթակղիչ է, բայց քիչ հավանական, այդ անվան մեջ տեսնել «Ամատունի» տոհմանունը:

²⁸ 'Ιουδαϊκή Ἀρχαιολογία, II, 6, 5: նաև, 'Εσθέρ. III, 1. Μετα δε ταυτα εδοξασεν ο βασιλευς Ἀρταξερξης Ἀμην Ἀμασαθου Βουγαίου καὶ ὕψωσεν αὐτον καὶ ἐπρωτοξάθηρει παντων των φυλων αὐτου». Հմմտ. F. Justi, Irantsches Namenbuch, Marburg, 1895, S. 125.